Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/8 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրում Ստեփան Սարգսյանի անվան ըմբշամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 13.05.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քոչարյան
Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Մարգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. Մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

(Մ. Աղայանց)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցների՝ «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 11.05.2026թ. ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

Մասնակիցների զբաղեցրած տեղեր	*Մասնակիցների անվանում*	**Տեխնիկական առաջարկ (ՏԱ)**	**Գնային առաջարկ (ԳԱ)**	*Գնահատման արդյունքում ստացած միավոր*
Ընտրված մասնակից	«Նորաշեն» ՆՏ ԱԿ	52.5	30	82.5
Այդպիսին չճանաչված մասնակից	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ	52.5	25	77.5

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Աղայանց

Անդամ՝ ---------- Ա. Քոչարյան

---------- Հ. Գինովյան

---------- Տ. Կոմիտասյան

---------- Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան